

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ
ԳՈՒՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Պատկերվող օբյեկտների տեղադրումը թղթի կամ կտավի մակերեսին դա՝

- 1) եռաչափ և երկչափ տարածության կազմակերպում է
- 2) հարթ մակերեսի կազմակերպում է
- 3) միայն երկչափ մակերեսի կազմակերպում է
- 4) միայն եռաչափ մակերեսի կազմակերպում է

2 Ընտրեք տեղադրման ճիշտ տարբերակները.



- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

3 Կոմպոզիցիայի ո՞ր տեսակն է ենթադրում էլեմենտների կրկնությամբ տեսողական հաջորդականություն ստեղծելը.

- 1) ռիթմիկ
- 2) դոմինանտ
- 3) սիմետրիկ
- 4) ստատիկ

4 Տրված կոմպոզիցիաներից ո՞րն է սիմետրիկ.



1.



2.



3.



4.

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

5 Ի՞նչ է իրենից ներկայացնում «կոնտրաստը» կոմպոզիցիայում.

- 1) որևէ էլեմենտի շուրջ կոմպոզիցիայի կենտրոնացում
- 2) էլեմենտների տարբերությունն՝ ըստ ձևի, չափսի, երանգի և գույնի
- 3) գունային կրկնություններով ներդաշնակության ստեղծում
- 4) կոմպոզիցիոն տարրերի համաչափ բաշխում

6 Ո՞ր ձևակերպումն է բնութագրում «կոմպոզիցիա» եզրույթը.

- 1) գունաբաշխման սկզբունք
- 2) լինդեումի վրա փորագրություն
- 3) հնուց հայտնի գեղանկարչության տեսակ
- 4) էլեմենտների տեսողական կազմակերպումը տարածության մեջ

7 Ի՞նչ է «ոսկե հատումը» կոմպոզիցիայում.

- 1) համաչափություն, որը համարվում է գեղագիտորեն կատարյալ և հարմոնիկ
- 2) հավասարակշռության կենտրոն
- 3) ստեղծագործության գունապնակ
- 4) կոմպոզիցիոն մակերեսի ձև

8 Կոմպոզիցիայի ո՞ր տեսակն է բնութաբով հակադարձ դինամիկ կոմպոզիցիային.

- 1) ռիթմիկ
- 2) դրամինանտ
- 3) ստատիկ
- 4) ասիմետրիկ

9

Նշվածներից ո՞րը չի համարվում գեղարվեստական տպագրության ձև.

- 1) խճանկար
- 2) վիմագրություն
- 3) լինոփորագրություն
- 4) օֆորտ

10

Կոմպոզիցիայում ի՞նչն է կոչվում «դոմինանտ».

- 1) շարժման բացակայությունը կոմպոզիցիայում
- 2) էլեմենտ, որը գերակա է մնացածի նկատմամբ
- 3) կոմպոզիցիայի երկրաչափական կենտրոնը
- 4) առանցքը որի նկատմամբ դասավորված են էլեմենտները

11

Միմյանց հակադարձ եզրույթների գույգերից, ո՞րն է սխալ.

- 1) ախրոմատիկ և խրոմատիկ
- 2) դինամիկ և ստատիկ
- 3) ռիթմիկ և դինամիկ
- 4) սիմետրիկ և ասիմետրիկ

12

Տրված կոմպոզիցիաներից ո՞րն է ստատիկ.



1.



2.



3.



4.

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

13

Տրված գունային եռյակներից ընտրեք տաք գույների խումբը.

- 1) կարմիր, կապույտ, մանուշակագույն
- 2) կապույտ, կանաչ, փիրուզագույն
- 3) դեղին, կանաչ, փիրուզագույն
- 4) կարմիր, նարնջագույն, դեղին

14

Տրված գույներից ո՞րն է ասոցացվում երջանկության, լավատեսության ու ջերմության հետ.

- 1) մոխրագույն
- 2) դեղին
- 3) երկնագույն
- 4) մանուշակագույն

15

Ո՞ր գույներն են համարվում մոնոխրոմ.

- 1) գունային շրջանի միմյանցից հավասարահեռ երեք գույների խումբը
- 2) գունային շրջանի միմյանց դեմ դիմաց գույները
- 3) գունային շրջանի երեք միմյանց կից գույները
- 4) միևնույն գույնի տարբեր հագեցվածության երանգները

16

Ո՞ր գույնն է ստացվում կապույտի և դեղինի խառնուրդից.

- 1) կանաչ
- 2) նարնջագույն
- 3) կարմիր
- 4) երկնագույն

17

Ո՞ր գույներն են համարվում ախրոմատիկ.

- 1) կապույտի բոլոր երանգները
- 2) գունային շրջանի միմյանց դեմ դիմաց գույները
- 3) սպիտակից սև մոխրագույնի բոլոր երանգները
- 4) միևնույն գույնի տարբեր հագեցվածության երանգները

18

Նշել երկրորդային գույների եռյակը.

- 1) կապույտ, կանաչ, մանուշակագույն
- 2) կարմիր, դեղին, նարնջագույն
- 3) կարմիր, դեղին, կապույտ
- 4) կանաչ, նարնջագույն, մանուշակագույն

19

Տրված գունային եռյակներից ընտրեք սառը գույների խումբը.

- 1) սև, մոխրագույն, սպիտակ
- 2) երկնագույն, կապույտ, մանուշակագույն
- 3) դեղին, կանաչ, փիրուզագույն
- 4) կարմիր, նարնջագույն, դեղին

20

Ընտրեք նախադասության ճիշտ շարունակությունը «Կարմիրը, դեղինն ու նարնջագույնը...»

- 1) ախրոմատիկ գույներ են
- 2) հիմնական գույներ են
- 3) տաք գույներ են
- 4) սառը գույներ են

21

Ո՞ր ժամանակաշրջանով է թվագրվում քարանձավային նկարչության սկզբնավորումը Եվրոպայում.

- 1) պալեոլիթ
- 2) մեզոլիթ
- 3) նեոլիթ
- 4) էնեոլիթ

22

Ո՞րն է ճարտարապետական կառույց հին Եգիպտոսում.

- 1) բիր-հիլանի
- 2) օդեոն
- 3) զիկկուրատ
- 4) մաստաբա

23

Մեգալիթյան կառույց է հանդիսանում՝

- 1) կրոնիկեր
- 2) դիպիլոն
- 3) մեգարոն
- 4) ագորան

24

Վիշապաքարի ո՞ր տեսակն է ներկայացված լուսանկարում.



- 1) ցլակերպ
- 2) վիշապակերպ
- 3) ձկնակերպ
- 4) ցլաձկնակերպ

25

Կերպարվեստի ի՞նչ տեսակ են իրենցից ներկայացնում Հայկական լեռնաշխարհի հայտնի ժայռապատկերները.

- 1) բարձրաքանդակ
- 2) հաստոցային քանդակ
- 3) մանրաքանդակ
- 4) փորագրաքանդակ

26

Ո՞րտեղ է գտնվում որմնանկարներով հարուստ Ալտամիրայի քարանձավը.

- 1) Իսպանիա
- 2) Արգենտինա
- 3) Մեքսիկա
- 4) Իտալիա

27

Հին եգիպտական ո՞ր հայտնի հուշարձանն է պատկերված լուսանկարում.



- 1) Խաչեփսութ կին-փարավոնի տաճարային համալիրը
- 2) Արքաների հովիտում դամբարանային համալիր
- 3) Ամենհոթեփ 3-րդ փարավոնի դամբարանային համալիրը
- 4) Ռամզես 2-րդ փարավոնի ժայռափոր տաճարը

28

Մ. թ. ա. 22-21-րդ դդ. թվագրվող արծաթե դրվագազարդ գավաթը հայտնաբերվել է՝



- 1) Պատավաքարում
- 2) Շենգավիթում
- 3) Լոռի-բերդում
- 4) Քարաշամբում

29

Վանի թագավորության գերագույն Խալդի աստվածության գլխավոր տաճարը գտնվել է՝

- 1) Մուծածիրում
- 2) Արգիշթիխինիլիում
- 3) Էրեբունիում
- 4) Թելշեբախինիում


30

Բաբելոնից հայտնի հուշարձան է.

- 1) Առյուծների դարպասները
- 2) Դիպիլոնյան դարպասները
- 3) Մարդուկ աստծոն նվիրված դարպասները
- 4) Իշթարի դարպասները

31

Հնագիտական տվյալների համաձայն ո՞ւմ է պատկերում բրոնզե արձանիկը.



- 1) Ուա աստվածությանը
- 2) Շիվինի աստվածությանը
- 3) Խալդի աստվածությանը
- 4) Թելշեբա աստվածությանը

32

Հին Հունաստանի <<Ռիսկոբոլ>> (սկավառականետորդ) քանդակի հեղինակն է՝

- 1) Ֆիդիասը
- 2) Պրաքսիտելեսը
- 3) Պոլիկլետեսը
- 4) Միրոնը

33

Աքեմենյան ժամանակաշրջանին վերագրվող հեծյալի կերպարով արծաթյա եղջրագավաթ (պտյակ) Հայաստանում հայտնաբերվել է՝

- 1) Շենգավիթում
- 2) Լճաշենում
- 3) Էրեբունիում
- 4) Վանաձորում

34

Հունա-հռոմեական տաճարի ո՞ր տիպին է պատկանում Գառնիի հեթանոսական տաճարը.

- 1) պերիպտերոս
- 2) ցելլա
- 3) թոլոս
- 4) դիպտերոս

35

Գառնիի բաղնիքի խճանկարը կատարված է՝

- 1) խեցու բեկորներով
- 2) բիտումով
- 3) գունախճիկով (սմալտա)
- 4) գետաքարերով

36

Կարիատիդների պորտիկը Աթենքի Ակրոպոլիսում գտնվող ո՞ր տաճարի բաղկացուցիչ մաս է կազմում.

- 1) Պրոպիլեոն
- 2) Նիկե Ապտերոս
- 3) Պարթենոն
- 4) Էրեքթեոն

37

Վաղ քրիստոնեական եռանավ բազիլիկ կառույց է՝

- 1) Աշտարակի Կարմրավոր եկեղեցին
- 2) Սուրբ Ստեփանոս (Լմբատավանք) եկեղեցին
- 3) Սբ. Հռիփսիմե եկեղեցին
- 4) Երեբույքի (տաճար) եկեղեցին

38

Կենտրոնագմբեթ ճարտարապետության օրինակ է՝

- 1) Երեբույքի տաճարը
- 2) Սուրբ Գայանե եկեղեցին
- 3) Զվարթնոցի տաճարը
- 4) Ծիծեռնավանքը

39

Գետնախարսիսի վրա տեղադրված մույթագարդ վաղքրիստոնեական հուշարձանի օրինակ է՝

- 1) Հաղպատի վանական համալիրի խաչքարը
- 2) Դսեղի քառակող կոթողը
- 3) Օձունի կոթողը
- 4) Տաթևի սյունը

40

Աստվածամոր տարածված պատկերատիպ քրիստոնեական սրբանկարչության ասպարեզում.

- 1) <<Մանդիլիոն>>
- 2) <<Օղիգիտրիա>>
- 3) <<Էմանուիլ>>
- 4) <<Պանտոկրատոր>>

41

Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրին, Թեոդորա կայսրուհուն և նրանց շքախումբը պատկերող խճապատկերային հորինվածքները գտնվում են՝

- 1) Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա եկեղեցում
- 2) Կիլիկիայի Ակների վանքում
- 3) Կոստանդնուպոլսի Սուրբ Իրինա եկեղեցում
- 4) Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցում

42

Ո՞ր եկեղեցին է հարդարում այս պատկերաքանդակը.



- 1) Էջմիածնի Մայր տաճարը
- 2) Գեղարդավանքը
- 3) Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին
- 4) Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին

43

Ի՞նչպիսի խաչքար գոյություն չունի.

- 1) բազմաբսիդ
- 2) քիվավոր
- 3) ամենափրկիչ
- 4) որմնափակ

44

Նշվածներից ո՞րն է գորթական տաճար.

- 1) Լեսսայի վանական համալիրը
- 2) Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարը
- 3) Քյոլնի տաճարը
- 4) Ֆլորենցիայի Սանտա Մարիա Դել Ֆիորե մայր տաճարը

45

Ո՞ր հայտնի ձեռագրից է մանրանկարը.



- 1) Մուղնու Ավետարան
- 2) Էջմիածնի Ավետարան
- 3) Վասակ իշխանի Ավետարան
- 4) Թարգմանչաց Ավետարան


46

Մումիկի պատկերագարդած ձեռագրերից է՝

- 1) Վասակ իշխանի Ավետարանը
- 2) Հաղպատի Ավետարանը
- 3) Պատերազմի Ավետարանը
- 4) Բուրթելի իշխանի Ավետարանը

47

Հայոց ո՞ր արքան է ներկայացված այս կտիտորական քանդակում.



- 1) Աշոտ Ողորմած-ը
- 2) Տրդատ 3-րդ-ը
- 3) Գագիկ Ա Բագրատունին
- 4) Գագիկ Արծրունին

48

Ո՞վ է Պաղոսյան գտնվող զորահրամանատար Գատամելատի ձիարձանի հեղինակը.

- 1) Միքելանջելո Բուանարոտտին
- 2) Բենվենուտո Չելլինին
- 3) Անդրեա Վեռոքքին
- 4) Դոնաթելլոն

49

Ո՞վ է Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարի հրապարակային պուճառի հեղինակը.



- 1) Կառլո Մադեռնան
- 2) Դոնատո Բրամանտեն
- 3) Լորենցո Բեռնինին
- 4) Ֆռանչեսկո Բոռոմինին

50

Ու՞մ վրձնին է վերագրվում որմնանկարը.



- 1) Նադաշ Հովնաթանյան
- 2) Ստեփանոս Ներսիսյան
- 3) Հակոբ Հովնաթանյան
- 4) Գևորգ Բաշինջաղյան

51

Հակոբ Հովնաթանյանի ո՞ր ստեղծագործությունն է հետմահու կատարված դիմանկար.

- 1) Եկատերինա Գուրգենբեկովայի դիմանկարը
- 2) Գրիգոր Թումանյանի դիմանկարը
- 3) Նատալյա Թեումյանի դիմանկարը
- 4) Շուշանիկ Նադիրյանի դիմանկարը

52

Նշվածներից ո՞վ է իմպրեսիոնիստ նկարիչ.

- 1) Գյուստավ Կուրբեն
- 2) Ժան Ֆրանսուա Միլլեն
- 3) Կամիլ Պիսսարոն
- 4) Ժակ Լուի Դավիդը

53

Նշել Հովհաննես Այվազովսկու վերջին անավարտ կտավը.

- 1) <<Քսոս>>
- 2) <<Դարյալի կիրճը>>
- 3) <<Ծովածոց>>
- 4) <<Թուրքական նավի պայթյունը>>

54

Ո՞ր թվականին է Պաբլո Պիկասոն վրձնել <<Ավինյոնի աղջիկները>> կտավը՝ հիմք դնելով կուբիզմի սկզբնավորմանը.



- 1) 1906 թ.
- 2) 1904 թ.
- 3) 1905 թ.
- 4) 1907 թ.

55

20-րդ դարի հայ քանդակագործներից ո՞վ է հաճախել Օգյուստ Ռոդենի արվեստանոց.

- 1) Արա Սարգսյանը
- 2) Այծենիկ Ուրարտուն
- 3) Երվանդ Քոչարը
- 4) Հակոբ Գյուրջյանը

56

Նշվածներից ո՞վ է փոփ-արթ ուղղության ներկայացուցիչ.

- 1) Անրի Մատիս
- 2) Բերթա Մորիզո
- 3) Ռենե Մագրիտ
- 4) Էնդի Ուորհոլ

57

Նշել քանդակագործ Արտաշես Հովսեփյանի ստեղծագործությունը.

- 1) Կոմիտասի մահարձանը Երևանում
- 2) Սայաթ-Նովա հուշաղբյուրը Երևանում
- 3) Ալեքսանդր Թամանյանի հուշարձանը Երևանում
- 4) Ստեփան Շահումյանի հուշարձանը Երևանում

58

Ո՞վ է նկարագարդման հեղինակը.



- 1) Էդուարդ Բասբեկյանը
- 2) Հակոբ Կոջոյանը
- 3) Գրիգոր Խանջյանը
- 4) Մարտիրոս Սարյանը

59

Ո՞ր գեղարվեստական ուղղությանն է պատկանում Անրի Մատիսի «Կարմիր սենյակ» ստեղծագործությունը.

- 1) ֆովիզմ
- 2) պուանտիլիզմ
- 3) էքսպրեսիոնիզմ
- 4) իմպրեսիոնիզմ

60

Ի՞նչպես է կոչվում Հակոբ Կոջոյանի կտավը.



- 1) «Պարսկական շուկա»
- 2) «Պարսկական ճաշարան»
- 3) «Փողոց Թավրիզում»
- 4) «Փողոց Կոստանդնուպոլսում»